

## ՀԻՓՈԹԵԶԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

**Բնակարանի ձեռք բերման կամ վերանորոգման հարցը չի շրջանցել նաև Ձե՞զ...  
Մտածում եք վերցնել վարկ, թե՞ ոչ...**

Շատերը մտածում են, որ հիփոթեքային վարկը թանկ հաճույք է: Սակայն հաշվարկեր այն ծախսերը, որոնք կրում եք հետաձգելով բնակարանի ձեռք բերումը.

Բնակարան վարձակալելիս վճարում եք ամսական հսկայական գումարներ՝ կամ ունեք բնակարան, սակայն այն այլևս չի՞ քաղարարում Ձեզ...

### **Ներդրեք ձեր գումարները առավել արդյունավետ և այսօր իսկ դիմեք վարկի համար**

Վարկի ժամկետը	Անշարժ գույքի վերանորոգման վարկեր՝ 1-ից մինչև 60 ամիս  Անշարժ գույքի ձեռքբերման վարկեր՝ 1-ից մինչև 120 ամիս
Տարեկան տոկոսադրույքը	Անշարժ գույքի վերանորոգում՝ 16%  Անշարժ գույքի ձեռքբերում՝ 15%
Կանխավճարի նվազագույն չափը	40%
Վարկի արժույթը	Անշարժ գույքի վերանորոգում՝ ՀՀ դրամ  Անշարժ գույքի ձեռքբերում՝ ՀՀ դրամ կամ ԱՄՆ դոլար
Միջնորդավճարները	<ol style="list-style-type: none"> <li>վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճար. <ul style="list-style-type: none"> <li>5000 ՀՀ դրամ</li> </ul> </li> <li>վարկի սպասարկման միջնորդավճար. <ul style="list-style-type: none"> <li>մինչև 12 000 000 ՀՀ դրամ վարկի դեպքում՝ 20 000 ՀՀ դրամ</li> <li>12 000 001-20 000 000 ՀՀ դրամ վարկի դեպքում՝ 30 000 ՀՀ դրամ</li> <li>20 000 001-40 000 000 ՀՀ դրամ վարկի դեպքում՝ 40 000 ՀՀ դրամ</li> <li>40 000 001 և ավել ՀՀ դրամ վարկի դեպքում՝ 80 000 ՀՀ դրամ</li> </ul> </li> <li>վարկային միջոցներից Հաճախորդի հաշվից կանխիկ միջոցների տրամադրում. <ul style="list-style-type: none"> <li>վարկի գումարի 0,3% (ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար).</li> <li>վարկի գումարի 0,5% (ԱՄՆ դոլար տրամադրված վարկերի համար).</li> </ul> </li> </ol>
Վաղաժամկետ մարման համար կիրառվող տույժեր	վաղաժամկետ մարվող գումարի 1%-ի չափով
Հաճախորդի այլ ծախսեր	<ol style="list-style-type: none"> <li>Գրավի գնահատման հետ կապված ծախսեր.</li> <li>Նոտարական ու կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր.</li> </ol>
Նպատակը	Անշարժ գույքի ձեռք բերում և (կամ) վերանորոգում
Պահանջվող փաստաթղթերի ցանկը	<b>Հաճախորդի ինքնությունը</b> <input checked="" type="checkbox"/> անձնագրի քնօրինակը և պատճեն <input checked="" type="checkbox"/> սոցիալական քարտը,

- ✓ ամուսնության վկայականը, եթե այդպիսին կա,
- ✓ ծննդյան վկայականը(ները) երեխայի(ների) համար, եթե այդպիսին(իք) կա(ն),
- ✓ հաճախորդի հետ միասին ապրող և նրա խնամքի տակ գտնվող անձանց թվաքանակի մասին պաշտոնական տեղեկանք,

**Տվյալներ եկամուտների մասին**

*Եթե հաճախորդն աշխատում է.*

- ✓ եկամուտների մասին տեղեկանք հիմնական գործատուի կողմից, որտեղ մանրամասնորեն նկարագրված կլինի վերջին 12 ամիսների փաստացի և կհաստատվի վճարված եկամուտների չափը,
- ✓ զբաղվածության մասին տվյալներ (ներկայում զբաղեցրած պաշտոնը, տվյալ կազմակերպությունում աշխատանքի ստաժը) և տվյալներ նախկին զբաղվածության մասին (գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը)<sup>1</sup>,
- ✓ երկրորդական եկամուտի ապացույցներ, որոնք պետք է հաշվի առնել,
- ✓ ամուսնու (կնոջ) եկամուտների մասին տեղեկանք (եթե ամուսնացած է),
- ✓ տվյալներ համավարկառուի/երաշխավորի զբաղվածության մասին (եթե այդպիսին կա),
- ✓ աշխատանքային գրքույկի պատճեն,
- ✓ աշխատանքային պայմանագրի պատճեն (առկայության դեպքում):

*Եթե ինքնազբաղված է, ապա*

- ✓ հարկ վճարողի համարի գրանցման վկայագիրը (հարկ վճարողի հարկային համարի),
- ✓ անհատ ձեռներեցի պետական գրանցման վկայագիրը,
- ✓ գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը,
- ✓ վերջին 1 տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված հարկային մարմինների կողմից,
- ✓ վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի հաշվետվությունները (գրառումները),
- ✓ վերջին 1 տարվա հարկային հաշվետվությունները:

**Վարկային անցյալ.**

- ✓ վերջին երեք տարիներին իրականացված բոլոր վարկային գործարքների մասին մանրամասն տվյալներ, ներառյալ վարկային և գրավի պայմանագրեր,

**Առկա հարաբերություններ այլ ֆինանսավարկային կազմակերպությունների հետ.**

- ✓ առկա բոլոր հաշիվների (ցանկացած տեսակի) և դրանց շարժի մասին տվյալներ (ամսական միջին մնացորդը, միջին ամսեկան մուտքերը և ելքերը),
- ✓ տեղեկատվություն (պետ. ռեզիստրից, դեպոզիտարիայից, ռեստրավարից) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության վերաբերյալ,
- ✓ Բանկերում ցայահանջ և ժամկետային ավանդային հաշիվների առկայության դեպքում, տեղեկանք վերջին 6 ամսվա շարժի և մնացորդի վերաբերյալ:

**Չեռք բերվող անշարժ գույքի հետ կապված փաստաթղթերի բնօրինակներ կամ կրկնօրինակներ**

<sup>1</sup> Այն պետք է պահանջվի միայն այն դեպքում, եթե դիմողի զբաղվածությունը 12 ամսից պակաս է

- ✓ Կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված սեփականության վկայական,
- ✓ տեղեկանք Կադաստրի պետական կոմիտեից առ այն, որ անշարժ գույքը գրավադրված կամ այլ տիպի առգելանքի տակ չէ (Միասնական տեղեկանք),
- ✓ սեփականության իրավունքի ձեռք բերումը հաստատող փաստաթուղթ (հիմքեր),
- ✓ վաճառողի (ամուսնու՝ առկայության դեպքում) անձնագրի և սոցիալական ապահովության քարտի, ամուսնության վկայականի պատճեն,
- ✓ այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Բանկը:

Վարկի առավելագույն չափը	կախված Հաճախորդի վճարունակությունից, սակայն չպետք է գերազանցի <ul style="list-style-type: none"> <li>• բնակարանի արժեքի 50%-ը՝ վերանորոգման վարկերի դեպքում, 60% ձեռքբերման վարկերի դեպքում.</li> <li>• 12 000 000 ՀՀ դրամը՝ վերանորոգման վարկերի դեպքում 80 000 000 ՀՀ դրամը կամ համարժեք ԱՄՆ դոլարը՝ ձեռքբերման վարկերի դեպքում</li> </ul>
-------------------------	--

Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	15 աշխատանքային օր
---	--------------------

Վարկի և հաշվեգրված տոկոսների մարման կարգը	ամենամսյա մարումների ժամանակացույց
Տոկոսադրույքների հաշվարկման կարգը	տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է նվազող մնացորդի նկատմամբ կամ անուիտետային եղանակով
Ժամկետանց տոկոսագումարների գծով տույժ	0.5 %
Ժամկետանց վարկի գումարի գծով տոկոսներ	ՀՀ ԿԲ հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկը և 0.2 % օրական տույժ
Վարկառուի կողմից վարկային պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը	Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն
Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ պայմանները	<ul style="list-style-type: none"> <li>• բավարար վարկունակություն.</li> <li>• անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն.</li> </ul>

*Ձեզ ընձեռնվում է Ձեր իսկ ճաշակով և երևակայությամբ բնակարան ձեռք բերելու կամ վերանորոգելու հնարավորություն...*

## ՀԻՓՈԹԵԶԱՅԻՆ ՆՈՐ ՎԱՐԿԱՏԵՍԱԿ՝ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Երիտասարդ ընտանիքներին հիփոթեքային վարկը տրամադրվում է բնակարանի ձեռքբերման նպատակով:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրով իրականացվող հիփոթեքային վարկավորման պայմաններն են.

- կանխավճարի չափը՝ նվազագույնը գրավի արժեքի 30%,
- տարեկան տոկոսադրույք՝ 10.5% դրույքաչափ,
- տարեկան տոկոսադրույքից 2%-ը սուբսիդավորվում է ՀՀ կառավարության կողմից,
- տոկոսադրույքի հաշվարկման կարգը՝ անուիտետային եղանակով կամ նվազող մնացորդի նկատմամբ,
- վարկի տրամադրման ժամկետ՝ 120-ից մինչև 180 ամիս
- վարկի գումարի չափը՝ առավելագույնը 11 000 000 ՀՀ դրամ,
- անշարժ գույքի ձեռքբերման արժեքի առավելագույն չափը՝ 16 000 000 ՀՀ դրամ,
- անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի առավելագույն չափը՝ 16 500 000 ՀՀ դրամ
- ապահովագրության պարտադիր պայմանով, տարեկան կտրվածքով՝
  - ✓ անշարժ գույքի ապահովագրություն՝ գրավի արժեքի վրա՝ համաձայն Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից սահմանված սակագների,
  - ✓ կյանքի ապահովագրություն՝ վարկի գումարի մնացորդի վրա՝ համաձայն Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից սահմանված սակագների,
- վարկի վաղաժամկետ մարման դեպքում՝ վաղաժամկետ մարվող գումարի 1%-ի չափով տույժի կիրառում,
- հաշվեգրված տոկոսների մարումները՝ ամենամսյա,
- վարկի գումարի մարումները՝ ամենամսյա հավասարաչափ կամ անուիտետային եղանակով:

*Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմեք 59 20 18  
հեռախոսահամարով կամ այցելեք [www.armbusinessbank.am](http://www.armbusinessbank.am) ինտերնետային  
կայքը:*